



Անկախ նրանից թե դուք քայլում եք զբոսայգում ակտիվ մնալու համար թե խանութ եք գնում կարող է պատահել որ վայր ընկնեք նաև դրսում: Հասարակական վայրերում շատ բաներ կարող եք անել կանխելու վար ընկնելու ռիսկը:

**1. Զգուշացեք թե որտեղ եվ երբ եք քայլում**

- Երեկոյան ժամերին քայլեք այնտեղ որտեղ բավականին լուսավորություն կայ:
- Եթե ձեր առջեվում ծառ եք տեսնում ապա նայեք թափված տերեփներ ին և ծառի արմատներին որոնք կարող է մայթեզրերին կուտակված լինեն:
- Ուշադրություն դարձրեք մայթերի ճաքած մասերին, փոսերին և մայթերի բարձրություններին:
- Փոթորկալից եղանակից հետո եղեք չափազանց ուշադիր : Անձրևը, ձյունը և սառույցը կարող են փողոցը սահուն դարձնել:
- Երբ քայլում եք համոզված եղեք որ կրում եք ճիշտ ակնոցներ: Բիֆոկալներ և կարդալու ակնոցներ կրելու դեպքում դժվար է տեսնել վտանգավոր բաները: Արևոտ օրերին կրեք արևային ակնոցներ խավարը կրճատելու համար:

**2. Ֆիզիկապես ակտիվ մնալու խորհուրդներ**

- Ֆիզիկական վարժություններ կատարելու համար ընտրեք լավ խնամված վայրեր ինչպիսիք են մուլերը կամ դպրոցների բակերը:
- Զբոսնելքիսմբով որպեսզի օգնեք իրարու վտանգի դեպքում:
- Կրեք հաստատուն եւ ցածր կրունկներով կոշիկներ: Վարժություններ կատարելիս կրեք հատուկ մարզանքի կոշիկներ:

**3. Ճամբորդեք անվտանգ**

- Դրսում աստիճաններով քայլելիս հենվեք երկաթյա հենակներին և շարժվեք դանդաղ:
- Ավտոկանգառներում եղեք ուշադիր մայթերի եզրերից մեքենաների կանգառներից և բարձրություններից:
- Հասարակական տրանսպորտից օգտվելու դեպքում ինչպիսիք են գնացքը կամ ավտոբուսը միշտ օգտվեք հենակներից եթե գոյություն ունեն:
- Փողոցը անցնելու դեպքում քայլեք նշված գծերի միջով և ոգտվեք մայթերի եզրում գտվող բաց անցումային մասերից: Փողոցը անցնելիս սպասեք որպեսզի վառվի հաջորդ անցումային ազդանշանը : Փողոցը անցնելիս շտապելու դեպքում կավելանա վայր ընկնելու ռիսկը:.

